ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-1-**Ո**-**Կ**-5

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ԷԴՈՒԱՐԴ ԱՄԱԼՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ՝
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

նախագահությամբ՝
Բարձրագույն դատական խորհրդի նախագահ — *Կ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ*

մասնակցությամբ՝ անդամներ — *Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ*
Ե. ԹՈՒՄԱՆՅԱՆՑԻ
Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆԻ
Մ. ՄԱԿՅԱՆԻ
Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆԻ
Վ. ՔՈՉԱՐՅԱՆԻ
Ս. ՉԻՉՈՅԱՆ

Արդարադատության նախարարի տեղակալ — *Լ. ԲԱԼՅԱՆԻ*

Արդարադատության նախարարի ներկայացուցիչներ — *Հ. ՍԱՆՈՅԱՆԻ*
Ա. ՍՈՒՔՅԱՆԻ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի ներկայացուցիչ — *Գ. ՄՈՒՂՆԵՑՅԱՆԻ*

քարտուղարությամբ՝ — *Թ. ՂՈՒԿԱՍՅԱՆԻ*

2023 թվականի հունվարի 26-ին քաղ. Երևանում

դռնբաց նիստում, քննության առնելով Արդարադատության նախարարի՝ «Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Էդուարդ Ամալյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 114-Ա որոշումը և կից ներկայացված փաստաթղթերը.

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել 2022 թվականի հուլիսի 5-ին թիվ ԵԴ/10027/02/20 քաղաքացիական գործով (այսուհետ նաև՝ Գործ) Աշոտ Մայիլյանի (այսուհետ նաև՝ Պատասխանող) հաղորդումը՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) դատավոր Էդուարդ Ամալյանի (այսուհետ նաև՝ Դատավոր) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ:

Արդարադատության նախարարի (այսուհետ նաև՝ Նախարար) 2022 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 96-Ա որոշմամբ Դատավորի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ:

Նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 114-Ա որոշմամբ միջնորդություն է ներկայացվել Բարձրագույն դատական խորհուրդ (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

2. **<u>Վարույթ հարուցած մարմնի դիրքորոշումը</u>**

Նախարարը, ներկայացրած միջնորդությամբ նշել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերից, 130-րդ հոդվածի 1-ին մասից, 131-րդ հոդվածի 1-ին մասից, 132-րդ հոդվածի 1-ին մասից, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետից, 28-րդ հոդվածի 3-րդ մասից հետևում է, որ օրենքով դատարանի համար սահմանված է հայցադիմումը վարույթ ընդունելու որոշումը գործին մասնակցող անձանց ուղարկելու պարտականություն, որը դատարանի կողմից պետք է կատարվի այդ որոշումը կայացնելուց հետո եռօրյա ժամկետում, սակայն, հաշվի առնելով հայցի ապահովման օրենսդրական նպատակը և կիրառման հիմքերը, դրանցով պայմանավորված հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունների քննության կարգը, որի շրջանակներում և՛

դատարանը, և՛ հարկադիր կատարումն ապահովող ծառայությունն ունեն անհապաղ գործելու պարտականություն՝ օրենսդիրը սահմանել է դատարանի՝ վերոնշյալ պարտականության կատարման այլ կարգ այն դեպքերի համար, երբ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հետ մեկտեղ բավարարել է հայցադիմումի հետ ներկայացված հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը: Այս դեպքում հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը (հայցադիմումը և դրան կից փաստաթղթերի պատճենները) դատարանի կողմից պատասխանողին և գործին մասնակցող այլ անձանց կարող է ուղարկվել միայն հայցի ապահովման մասին դատարանի որոշումը կատարելուց հետո, որպիսի հանգամանքը հաստատող ապացույց է հանդիսանում Հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ նաև՝ Ծառայություն) կողմից կայացված կատարողական վարույթն ավարտելու մասին որոշումն առ այն, որ ավարտվել են հայցի ապահովման վերաբերյալ կատարողական թերթի պահանջների կատարմանն ուղղված կատարողական գործողությունները: Ընդ որում, կատարողական վարույթով պարտապանի (պատասխանողի)՝ իր դեմ հարուցված քաղաքացիական գործի և որպես հայցի ապահովման միջոց կիրառված արգելանքի մասին Ծառայությունից կամ այլ աղբյուրներից տեղեկացված լինելն իրավական նշանակություն չունեցող և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգի փոփոխության չհանգեցնող հանգամանք է: Վերոգրյալ իրավակարգավորումները և դրանց վերաբերյալ արված վերլուծությունները թույլ են տալիս արձանագրել, որ Ծառայության համապատասխան որոշման բացակայության պայմաններում դատարանի համար սահմանափակված է քաղաքացիական գործի քննությանն ուղղված օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

Նախարարը, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 7-րդ մասը, 139-րդ հոդվածի 1-ին մասը, նշել է, որ դատարանի՝ հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը պատասխանողին ուղարկելու պարտականության կատարմամբ անմիջապես պայմանավորված է հարուցված քաղաքացիական գործով պատասխանողին վերապահված՝ հայցադիմումի պատասխան ներկայացնելու իրավունքի փաստացի իրականացումը: Ընդ որում, հայցադիմումի պատասխան ներկայացնելու իրավունքի ապահովման երաշխիք է հանդիսանում ոչ միայն դատարանի կողմից հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշման օրենքով սահմանված կարգով տրամադրումը պատասխանողին, այլև այդ իրավունքի և դրա ժամկետի մասին տեղեկացումը վերջինիս: Օրենքով սահմանված է նաև նշված իրավունքի իրականացման կարգը, ըստ որի՝ պատասխանողը հայցադիմումի պատասխան կարող է ներկայացնել երկշաբաթյա ժամկետում, որի հաշվարկը սկսվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալու օրվանից:

Քննարկվող դեպքում Դատարանի կողմից 2020 թվականի մարտի 24-ին կայացվել են հայցադիմումը վարույթ ընդունելու մասին և հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումներ: Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշման հիման վրա դրա կատարման համար էլեկտրոնային (ԱրմԼեքս) համակարգի միջոցով Դատարանի կողմից 2020 թվականի ապրիլի 13-ին Ծառայություն են ուղարկվել թիվ ԿԹ-261512-2020 և թիվ ԿԹ-

261528-2020 կատարողական թերթերը: Թիվ 261528 կատարողական թերթով 2020 թվականի ապրիլի 16-ին հարուցված թիվ 06073361 կատարողական վարույթով Ծառայության կողմից 2021 թվականի հուլիսի 2-ին կայացվել է կատարողական վարույթն ավարտելու մասին որոշում, որն էլեկտրոնային համակարգի միջոցով 2021 թվականի հուլիսի 8-ին ուղարկվել է Դատավորին: Նշվածից հետևում է, որ Դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 3-րդ մասի կանոններով առաջնորդվելու դեպքում, հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը, Գործում առկա հայցադիմումի օրինակը և դրան կից փաստաթղթերը կարող էր Գործով պատասխանողներին ուղարկել 2021 թվականի հուլիսի 8-ից հետո միայն, դրան հաջորդող եռօրյա ժամկետում, այն է՝ մինչև 2021 թվականի հուլիսի 13-ը ներառյալ: Մինչդեռ՝ Դատարանի կողմից հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը, հայցադիմումի օրինակը և դրան կից փաստաթղթերը (այսուհետ նաև՝ Փաստաթղթեր), հայցադիմումի պատասխան ներկայացնելու իրավունքի և ժամկետի վերաբերյալ պարզաբանմամբ Պատասխանողի ներկայացուցչին են ուղարկվել ավելի վաղ՝ դեռևս 2020 թվականի մայիսի 27-ին (Պատասխանողի կողմից դրանք ստացվել են 2020 թվականի հունիսի 15-ին): Գործում Պատասխանողի ներկայացուցչի 2020 թվականի մայիսի 18-ի և 2020 թվականի մայիսի 22-ի գրությունների առկայությունը թույլ է տալիս ենթադրել, որ Դատարանի կողմից նախքան օրենքով նախատեսված իրավական հիմքի ծագումը Փաստաթղթերը պատասխանողներից մեկին ուղարկելը պայմանավորված է եղել դիմումներով ներկայացված՝ նշված փաստաթղթերը ստանալու պահանջով: Դատարանի կողմից օրենքով սահմանված կարգի խախտմամբ Փաստաթղթերի ուղարկումը Պատասխանողի համար առաջացրել է հայցադիմումի պատասխան ներկայացնելու հնարավորություն, և հատկանշական է, որ Պատասխանողը, ստանալով հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը, իրացրել է հայցադիմումի պատասխան ներկայացնելու իր իրավունքը, մասնավորապես՝ 2020 թվականի հունիսի 29-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Արաբկիր նստավայրում մուտքագրվել է Պատասխանողի ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումի պատասխանը: Չնայած այն հանգամանքին, որ Պատասխանողի կողմից հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշման ստացմամբ վերջինիս համար ստեղծել է հայցադիմումի պատասխան ներկայացնելու կարծեցյալ իրավական հիմքը և Պատասխանողի ներկայացուցչի կողմից դրան հաջորդող երկշաբաթյա ժամկետում ներկայացվել է հայցադիմումի պատասխան՝ նշվածը չի կարող վկայել այն մասին, որ Գործով հայցադիմումի պատասխանը ներկայացված է օրենքով սահմանված կարգով կամ այլ կերպ՝ Պատասխանողն իրացրել է հայցադիմումի պատասխան ներկայացնելու իր իրավունքը: Միաժամանակ, որպես այդպիսին այն չի կարող նախապայման հանդիսանալ հետագա դատավարական ընթացակարգերի համար, քանի որ, հակառակ պարագայում, Դատարանը, 2020 թվականի հունիսի 29-ին ստանալով հայցադիմումի պատասխանը, դրան հաջորդող եռօրյա ժամկետում պետք է կայացներ նախնական դատական նիստ նշանակելու մասին որոշում և այդ որոշման կայացմանը հաջորդող երեսնօրյա ժամկետում

հրավիրեր նախնական դատական նիստ, մինչդեռ նշված ժամանակահատվածում Դատարանի կողմից այդպիսի որոշում չի կայացվել:

Արդյունքում, Դատավորի կողմից խախտվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը:

Նախարարը, վկայակոչելով ՀՀ սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետը, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 8-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին մասը, 166-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերը, նշել է, որ հայցային վարույթի կարգով քննվող գործերով դատարանի կողմից նախնական դատական նիստ հրավիրելը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված է որպես պարտադիր պահանջ (բացառությամբ՝ պարզեցված վարույթի և արագացված դատաքննության կարգով քննվող գործերի), որի նշանակման համար կարևոր նախապայման է համարվում առաջին ատյանի դատարանի կողմից՝ պատասխանողից հայցադիմումի պատասխանը ստանալու, իսկ այն չներկայացվելու դեպքում պատասխան ուղարկելու համար սահմանված ժամկետն ավարտվելու, ինչպես նաև վերադաս դատարանից գործն ստանալու հանգամանքներից որևէ մեկի առկայությունը, որպիսի փաստով պայմանավորված դատարանի համար ծագում է դրան հաջորդող եռօրյա ժամկետում նախնական դատական նիստ նշանակելու վերաբերյալ որոշման կայացման պարտականություն: Ընդ որում, առաջին ատյանի դատարանի կողմից նախնական դատական նիստը պետք է հրավիրվի ոչ ուշ, քան այն նշանակելու մասին որոշման կայացմանը հաջորդող երեսնօրյա ժամկետում:

Վկայակոչելով Կառավարության 2018 թվականի մարտի 29-ի թիվ 350-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված հավելվածի 1-5-րդ կետերը՝ Նախարարը նշել է, որ Որոշման 3-րդ և 4-րդ կետերով սահմանված նորմերի համադրված վերլուծությունից հետևում է, որ դատավորին մակագրված կոնկրետ դատական գործերով և կատարողական վարույթներով օգտատեր է հանդիսանում դատավորը: Վերջինիս, որպես օգտատեր, անհատական մուտքանուն և գաղտնաբառ տրամադրելու միջոցով վերապահվում է էլեկտրոնային համակարգ մուտք գործելու և իրեն մակագրված դատական գործերի ու կատարողական վարույթների շրջանակներում փաստաթղթեր ուղարկելու (որպիսին կարող են հանդիսանալ կատարողական թերթերը, դատական ակտերը) և ստանալու (որպիսին կարող է հանդիսանալ կատարողական վարույթին առնչվող որոշումները) իրավասություն: Քննարկվող դեպքում կարևորվում է նաև այն հանգամանքը, որ էլեկտրոնային համակարգը համալրված է փաստաթղթի ստացման մասին օգտատիրոջն էլեկտրոնային եղանակով ծանուցելու հնարավորությամբ:

Վկայակոչված կարգավորումների և Գործի փաստական հանգամանքների համադրությունից հետևում է, որ կատարողական վարույթն ավարտելու մասին 2021 թվականի հուլիսի 2-ի որոշումը Ծառայության կողմից Դատարան է ուղարկվել և Դատարանի կողմից ստացվել է 2021 թվականի հուլիսի 8-ին, ուստի 2021 թվականի հուլիսի

8-ի դրությամբ Գործով ծագել է դրան հաջորդող եռօրյա ժամկետում Փաստաթղթերը պատասխանողներին ուղարկելու իրավական հիմքը, և ինչպես արդեն վերևում նշվեց՝ Փաստաթղթերը պետք է պատասխանողներին ուղարկվեին մինչև 2021 թվականի հուլիսի 13-ը ներառյալ, սակայն Դատարանի կողմից այս անգամ դրանք պատասխանողներ Ա. Մայիլյանին և Հ. Հարությունյանին ուղարկվել են 2022 թվականի փետրվարի 10-ին: Փաստորեն Դատարանը, Փաստաթղթերը պատասխանողներին միայն 2022 թվականի փետրվարի 10-ին ուղարկելով, 2021 թվականի հուլիսի 13-ից մինչև 2022 թվականի փետրվարի 10-ը՝ շուրջ 7 ամիս դրսևորել է անգործություն, որի արդյունքում համապատասխան ժամանակահատվածով առանց անհրաժեշտության ձգձգվել է Գործի քննությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ քննարկվող իրավահարաբերություններում նախնական դատական նիստ նշանակելու մասին որոշման կայացումը, այնուհետև նախնական դատական նիստի հրավիրումը պայմանավորված է պատասխանողների կողմից Փաստաթղթերի ստացմամբ հայցադիմումի վերաբերյալ պատասխան ներկայացնելու կամ այն չներկայացվելու դեպքում պատասխան ուղարկելու համար սահմանված ժամկետն ավարտվելու հանգամանքներից մեկի առկայությամբ: Տվյալ դեպքում Գործով առկա է պատասխանողներ Ա. Մայիլյանի և Հ. Հարությունյանի կողմից Փաստաթղթերը համապատասխանաբար 2022 թվականի մարտի 16-ին և 2022 թվականի փետրվարի 18-ին ստացված լինելու (հայցադիմումի պատասխան ներկայացված չլինելու) հանգամանքը, որպիսի փաստով պայմանավորված Ա. Մայիլյանի մասով հայցադիմումի պատասխան ներկայացնելու երկշաբաթյա ժամկետը լրացել է 2022 թվականի մարտի 30-ին, իսկ Հ. Հարությունյանի մասով՝ 2022 թվականի մարտի 4-ին: Դատարանի կողմից Գործով նախնական դատական նիստ նշանակելու մասին որոշումը կայացվել է հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետն ավարտվելու օրվան հաջորդող եռօրյա ժամկետում:

Վկայակոչելով Բարձրագույն դատական խորհրդի 2022 թվականի նոյեմբերի 24-ի թիվ ԲԴԽ-105-Ո-Կ-25, 2022 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ ԲԴԽ-72-Ո-Կ-17 որոշումներով արտահայտած դիրքորոշումները՝ Նախարարը նշել է, որ դրանց լույսի ներքո անհրաժեշտ է դիտարկել դատարանի կողմից դատավարական ժամկետները պահպանելու պարտականությունն անձի՝ արդար դատաքննության իրավունքի տարր համարվող՝ իր գործի ողջամիտ ժամկետում քննության իրավունքի իրականացումն ապահովելու համատեքստում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան) և ՀՀ սահմանադրական դատարանը բազմիցս անդրադարձել են «ողջամիտ ժամկետում» գործերի քննությանը (տե՛ս, Cases of H. v. France, application no. 10073/82, 24/10/1989, and Katte Klitsche de la Grange v. Italy, application no. 12539/86, 27/10/1994, Stögmüller v. Austria (1602/62) գործով Եվրոպական դատարանի 10.11.1969 թվականի վճիռը, H. v. France (10073/82) գործով Եվրոպական դատարանի 24.10.1989 թվականի վճիռը, ՀՀ սահմանադրական դատարանի 2021 թվականի մարտի 16-ի թիվ ՍԴՈ-1585 որոշումը):

Դատավարության յուրաքանչյուր մասնակից ակնկալում է ողջամիտ ժամկետում իր գործի քննություն և գործն ըստ էության լուծող դատական ակտի կայացում, և գործի՝

ողջամիտ ժամկետում քննությունը համարվում է ապահովված այն ժամանակ, երբ դատարանը գործի քննությունն իրականացրել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի սահմանված կարգով՝ դրա յուրաքանչյուր փուլում ապահովելով իր լիազորությունների իրականացումն օրենսդրի կողմից սահմանված դատավարական ժամկետների պահպանմամբ:

Արդյունքում, Դատավորի կողմից խախտվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 3-րդ մասի, 166-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, որոնք, որպես հետևանք, հանգեցրել են նաև Գործի մասնակիցների Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում, ՀՀ սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված անձի հիմնարար՝ իր գործի քննությունը ողջամիտ ժամկետում իրականացնելու իրավունքի խախտման:

Նախարարը նշել է, որ Օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետից, 70-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետից հետևում է, որ ցանկացած դեպքում դատավորը պարտավոր է իր գործունեությունն իրականացնել այնպես, որ բարձր պահի դատական իշխանության հեղինակությունը՝ թե՛ որպես անհատ, և թե՛ որպես արդարադատություն իրականացնող անձ՝ թույլ չտալով այնպիսի գործողություն կամ անգործություն, որոնք կարող են որևէ կերպ վարկաբեկել դատական իշխանությունը կամ հանրության ցանկացած անդամի մոտ ստեղծել այնպիսի տպավորություն, որը կարող է թյուր պատրանք ստեղծել կամ այլ կերպ բացասական ազդեցություն ունենալ դատական իշխանության անկախության և անաչառության վրա: Դատավորի կողմից գործի ողջամիտ ժամկետում քննության իրականացման պահանջն իր ամրագրումն է ստացել ոչ միայն դատավարական օրենսգրքերում, այլ նաև՝ դատավորին ներկայացվող վարքագծի կանոններում՝ իրենից ներկայացնելով առանձնակի կարևորություն, քանի որ, որոշ դեպքերում և պայմաններում, դրա խախտումը կարող է իր ազդեցությունն ունենալ դատական իշխանության հեղինակազրկման հարցում՝ հանգեցնելով դատական իշխանության նկատմամբ դատավարության մասնակիցների անվստահության ձևավորմանը, ինչպես նաև կարծիք ստեղծել՝ իրեն վերաբերող վեճի լուծման շուրջ արդարադատություն իրականացնող մարմնի կողմից դրսևորվող անտարբերության տեսանկյունից:

Նախարարը նշել է, որ ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդի 2006 թվականի թիվ 2006/23 բանաձևով հաստատված Դատավորների վարքագծի բանգալորյան սկզբունքների (այսուհետ՝ Բանգալորյան սկզբունքներ) 4-րդ, 6.5-րդ կետերից, Բանգալորյան սկզբունքների մեկնաբանություններից հետևում է, որ յուրաքանչյուր դեպքում, երբ անձն ընտրում է իր իրավունքների պաշտպանության դատական կարգը՝ վստահելով իր մասնակցությամբ վեճի լուծումը դատարանին և ունենալով լեգիտիմ ակնկալիք, որ դատարանը հնարավորինս սեղմ ժամկետներում կքննի և կլուծի իր գործը, իսկ դատարանը չի պահպանում օրենքով սահմանված դատավարական ժամկետները, ապա նման վարքագիծը ոչ միայն հանգեցնում է առանց արդարադատության շահերին վնասելու՝ ողջամիտ ժամկետում և նվազագույն դատական ծախսերի կատարմամբ օրենքով իր իրավասությանը վերապահված հարցերը քննելու և լուծելու վարքագծի կանոնի, այլև դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության

վստահությունը նվազեցնող վարքագիծ դրսևորելուց զերծ մնալու վարքագծի կանոնի խախտման, քանի որ դատարանի կողմից գործի քննության և լուծման ձգձգելու արդյունքում անձի մոտ խարխլվում է դատական համակարգի և արդարադատության արդյունավետության նկատմամբ վստահությունը՝ հեղինակազրկելով դատական իշխանությունը:

Քննարկվող դեպքում Դատարանի կողմից Փաստաթղթերն օրենքով սահմանված կարգի խախտմամբ Պատասխանողին ուղարկելը, որի արդյունքում վերջինս հայցադիմումի պատասխան ներկայացնելով՝ 2020 թվականին, արդեն իսկ ակնկալել է նախնական դատական նիստի նշանակում, ինչպես նաև 2021 թվականի հուլիսի 2-ի հայցի ապահովման միջոց կիրառելու մասին Դատարանի որոշման կատարման մասին պատշաճ ապացույցի առկայության պայմաններում Փաստաթղթերը Գործով պատասխանողներին ուղարկելու համար սահմանված եռօրյա ժամկետն էապես խախտելու, դրանով պայմանավորված՝ նախնական դատական նիստի նշանակումը համապատասխան ժամկետով հետաձգելու հանգամանքը Պատասխանողի, ինչպես նաև անկողմնակալ դիտորդի մոտ առաջացնում է ողջամիտ կասկած՝ Դատավորի կողմից առանց արդարադատության շահերին վնասելու՝ ողջամիտ ժամկետում օրենքով իր իրավասությանը վերապահված հարցերը քննելուն և լուծելուն ուղղված անհրաժեշտ շրջահայացություն և պատշաճ վարքագիծ ցուցաբերելու առնչությամբ: Դատարանի նման գործելակերպն ուղղակի ազդեցություն է ունենում դատարանի գործունեության արդյունավետության վրա, որն իր հերթին նվազեցնում է հանրության վստահությունն արդարադատության նկատմամբ և հեղինակազրկում դատական իշխանությունը:

Արդյունքում, Դատավորի կողմից խախտվել են նաև Օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 70-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով սահմանված վարքագծի կանոնները:

Միաժամանակ վարույթի փաստական հանգամանքների, Դատավորի բացատրության և կատարված իրավական վերլուծության համադրման արդյունքում Նախարարը գտել է, որ Դատավորի կողմից դատավարական իրավունքի նորմերի խախտումը կատարվել է մեղավորությամբ, որ դրսևորվել է կոպիտ անփութությամբ, քանի որ Դատավորը չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 3-րդ մասով, 166-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ Փաստաթղթերը Գործով պատասխանողներին ուղարկելու, նախնական դատական նիստ նշանակելու մասին որոշում կայացնելու կարգի և ժամկետների խախտման հանգամանքը, թեև տվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ իր վրա դրված պարտականություններն օրենքով սահմանված կարգով և ժամկետների պահպանմամբ կատարելու համար: Մասնավորապես՝ 2022 թվականի ապրիլի 4-ի նախնական դատական նիստ նշանակելու մասին որոշմամբ և բացատրությամբ Դատավորն իրավական դիրքորոշում է հայտնել առ այն, որ հայցի ապահովման վերաբերյալ կատարողական վարույթն ավարտվել է, ուստի պետք է որոշում կայացնել նախնական դատական նիստ նշանակելու մասին: Փաստորեն, Դատարանը նախնական դատական նիստ նշանակելու մասին որոշման կայացման

նախապայման է դիտել հայցի ապահովման մասին դատարանի որոշման կատարված լինելը, մինչդեռ նշված հանգամանքը պայման է հանդիսանում այս դատավարական գործողությունների միջև ընկած՝ պատասխանողներին հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը տրամադրելու միջոցով իրենց դեմ հարուցված քաղաքացիական գործի մասին տեղեկացնելու, հայցադիմումը և կից փաստաթղթերը տրամադրելով՝ վերջիններիս հայցից պաշտպանվելու իրավունքի իրականացումն ապահովելու համար:

Վերոգրյալից հետևում է, որ Դատավորի կողմից կոպիտ անփութությամբ դատավարական նորմերի խախտումներ կատարելու հետ միաժամանակ վերջինս կոպիտ անփութությամբ թույլ է տվել նաև դատավորի վարքագծի կանոնների խախտում՝ ի պաշտոնե գործելիս առանց արդարադատության շահերին վնասելու՝ ողջամիտ ժամկետում չքննելով և չլուծելով իր իրավասությանը վերապահված հարցերը և ցանկացած գործունեություն իրականացնելիս և բոլոր հանգամանքներում զերծ չմնալով դատական իշխանությունը վարկաբեկող, ինչպես նաև դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող վարքագիծ դրսևորելուց:

Անդրադառնալով Դատավորի կողմից ներկայացված բացատրությանը՝ Նախարարը նշել է, որ այն հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.

Բացատրությամբ Դատավորը կատարել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի և 166-րդ հոդվածի համապատասխան մասերի իրավական վելուծություններ՝ նշելով. «օրենսդիրը Դատարանի նախնական դատական նիստ հրավիրելու լիազորությունը պայմանավորել է պատասխանողի՝ հայցադիմումի պատասխան ներկայացնելու, կամ այդպիսին չներկայացվելու դեպքում օրենքով սահմանված հայցադիմումի պատասխանի ներկայացման ժամկետի ավարտից հետո», «Դատարանն առանց հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշման կատարման ապացույցի իրավասու չէ որևէ այլ ցանկացած հաջորդող դատավարական գործություն իրականացնել», որոնք բխում են դրանց կարգավորումներից, սակայն ինչպես Գործի քննության ընթացքում, այնպես էլ հետագա բացատրության մեջ Գործի փաստերի առնչությամբ հետևություններ անելիս Դատավորը չի առաջնորդվել իր կողմից ներկայացված դիրքորոշմամբ: Այս համատեքստում Դատավորը, արձանագրելով առանց հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշման կատարման մասին ապացույցի որևէ դատավարական գործողություն կատարելու դատարանի լիազորության բացակայությունը, այդուհանդերձ օրենքով սահմանված կարգի խախտմամբ 2020 թվականի հունիսի 29-ի Դատարան ստացված հայցադիմումի պատասխանը ներառել է 2022 թվականի սեպտեմբերի 16-ի վճռում՝ նշելով, որ հայցադիմումի պատասխանում ներառված դիտարկումներին այլևս չի անդրադառնում միայն այն փաստով պայմանավորված, որ հայցադիմումի պատասխան ներկայացնելուց հետո պատասխանողները ձեռնամուխ են եղել պարտավորության կատարմանը, ընդունել են ներկայացված հայցապահանջը:

3. **<u>Դատավորի դիրքորոշումը հարուցված կարգապահական վարույթի վերաբերյալ</u>**

Սույն կարգապահական վարույթի շրջանակում Դատավորը բացատրություն է ներկայացրել Նախարարին և միջնորդել է կարճել կարգապահական վարույթը: Մասնավորապես Դատավորը նշել է, որ այն դեպքում, երբ հարուցվում է հայց և հայցվորն ակնկալում է նաև հայցի ապահովման միջոցի կիրառում, ապա այդպիսի միջնորդության բավարարումից հետո դատարանն առանց հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշման կատարման ապացույցի իրավասու չէ որևէ այլ ցանկացած հաջորդող դատավարական գործություն իրականացնել:

Սույն կարգապահական վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստերից հետևում է, որ Դատարանի կողմից հայցադիմումը վարույթ ընդունելուց և հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշում կայացնելուց հետո կատարողական վարույթն ավարտելու վերաբերյալ որոշումը ստացվել է 2022 թվականի փետրվարի 3-ին:

Դատավորը նշել է, որ Դատարանի՝ նախնական դատական նիստ հրավիրելու պարտականությունը ծագել է կատարողական վարույթն ավարտելու վերաբերյալ որոշումը ստանալուց հետո, որպիսի գործողությունները կատարվել են, Դատարանի կողմից հրավիրվել են ընդամենը երկու դատական նիստեր և ավարտվել է սույն քաղաքացիական գործի քննությունը, կայացվել է դատական ակտ և այն տրամադրվել է կողմերին:

Խորհրդին ներկայացրած պատասխանով Դատավորը խնդրել է մերժել իրեն կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությունը հետևյալ պատճառաբանությամբ.

Դատավորը նշել է, որ Ծառայության կողմից 2021 թվականի հուլիսի 2-ի որոշումը Դատարանում մուտքագրվել է 2022 թվականի փետրվարի 3-ին: Կարգապահական վարույթի նյութերում բացակայում է որևէ ապացույց Ծառայության կողմից կատարողական վարույթն ավարտելու մասին որոշում կայացված լինելու մասին Դատավորի ծանուցվելու վերաբերյալ (գործնականում այդպիսի ծանուցում ուղղակիորեն չի իրականացվում):

Դատավորը նշել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերի կարգավորմամբ օրենսդիրը սահմանել է դատավարական այն գործողությունների ամբողջությունը, որպիսիք պետք է իրականացվեն դատարանի կողմից հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշման կայացումից հետո, միաժամանակ պայմանավորված հայցի ապահովման միջոց կիրառելու միջնորդության և դրա վերաբերյալ դատարանի համապատասխան որոշման առկայությամբ տարբերվում են պատասխանողին հայցադիմումը վարույթ ընդունելու, հայցադիմումը և կից փաստաթղթերն ուղարկելու ժամանակահատվածները: Սակայն նշվածին զուգահեռ, դատավարական օրենսդրությամբ կարգավորված չեն և առկա չեն նաև այնպիսի իրավական մեկնաբանություններ, որպիսիք են այնպիսի դեպքերը, երբ պատասխանողը դիմում է դատարանին հայցադիմումը և կից փաստաթղթերը ստանալու խնդրանքով կամ երբ պատասխանողը դիմում է ներկայացնում քաղաքացիական գործի նյութերին ծանոթանալու և պատճեններ, լուսապատճեններ ստանալու խնդրանքով: Նշված իրավիճակներում դատարանի համար որևէ օրենսդրական արգելք առկա չէ փաթեթը չտրամադրելու կամ գործը ծանոթացման չտրամադրելու համար: Օրենսդրի կողմից նման դատավարական կանոնակարգումը նպատակ է հետապնդում բացառելու պատասխանողի

հարուցված հայցի մասին տեղեկանալու և, ըստ այդմ, օրինակ՝ գույքի օտարման գործընթաց սկսելու իրավիճակները:

Միաժամանակ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դատարանն իր կողմից յուրաքանչյուր քաղաքացիական գործով կայացված որոշման վերաբերյալ գործողությունները լրացնում է նաև www.datalex.am դատական իշխանության պաշտոնական կայքում, որն ազատ է ծանոթացման և տեղեկությունների ստացման առումով, դրանում լրացվում են նաև համապատասխանաբար հայցի ապահովման միջոց ձեռնարկելու միջնորդության ելքի վերաբերյալ տեղեկություններ, հետևաբար յուրաքանչյուր դեպքում նշված տեղեկություններն ուղղակիորեն հասանելի են դատավարության մասնակիցներին:

Դատավորը, վկայակոչելով Բարձրագույն դատական խորհրդի 2019 թվականի հունվարի 11-ի թիվ ԲԴԽ-60-Ո-Կ-01, 2019 թվականի ապրիլի 1-ի թիվ ԲԴԽ-17-Ո-Կ-06 որոշումներով արտահայտած դիրքորոշումները, նշել է, որ վարույթ հարուցող մարմինը, իրեն վերագրելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում, որևէ կերպ չի հիմնավորել, թե Դատարանի նման գործողության կատարումը դատավարության մասնակցի որ իրավունքն է խախտել: Ընդ որում՝ Դատարանի կողմից մեկ անգամ նյութերը տրամադրվել են Պատասխանողի ներկայացուցչի թվով երկու դիմումների հիման վրա, իսկ երկրորդ անգամ, Դատարանն իրականացրել է համապատասխան գործողությունը՝ ապահովելու համար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի պահանջների կատարումը: Ըստ էության միջնորդությամբ նաև առկա չէ որևէ հիմնավորում և որևէ եղանակով չի ընդգծվում այնպիսի պատճառահետևանքային կապ, թե փաստաթղթերի ի սկզբանե տրամադրումն ինչպես է հանգեցրել անձի՝ արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր կազմող ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոշարադրյալը, Դատավորը նշել է, որ իր կողմից թույլ չի տրվել դատավարական նորմի այնպիսի խախտում, որը կարող է հանգեցնել կարգապահական պատասխանատվության:

Հաջորդիվ վկակակոչելով ՀՀ սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասը, 63-րդ հոդվածի 1-ին մասը, Օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերը, գործի քննության ողջամիտ ժամկետի պահպանված լինելու վերաբերյալ Եվրոպական դատարանի որոշմամբ արտահայտած դիրքորոշումը, ՀՀ դատարանների նախագահների խորհրդի կողմից թիվ 23-Լ որոշմամբ հաստատված Դատարանների գործավարության կանոնների 3-րդ բաժնի 1-ին կետը՝ Դատավորը նշել է, որ դատարան ներկայացված բոլոր փաստաթղթերը պետք է մուտքագրվեն: Գործնականում, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ կատարողական թերթն ուղարկվում է էլեկտրոնային եղանակով և դրա վերաբերյալ որոշումները կրկին ներկայացվում են էլեկտրոնային եղանակով, դատարանի աշխատակազմը որոշումները տպում է «Արմլեքս» համակարգից և ներկայացնում գրասենյակ՝ այն մուտքագրելու և հետագայում դատական գործին կցելու համար, այսինքն՝ ժամկետի հաշվարկը սկսվում է դատարանի գրասենյակի կողմից մուտքագրելու պահից սկսած, քանի որ մինչ այդ նշված փաստաթուղթը դատական գործի մաս չի կազմում:

Սույն իրավիճակում իր կողմից կատարված խախտումը գնահատելու համար Դատավորն անդրադարձել է էլեկտրոնային համակարգի գործունեությանը: Այսպես, Ծառայության կողմից համապատասխան որոշման կայացումից հետո դատավորը կամ վերջինիս աշխատակազմն առանձին ծանուցում չեն ստանում, «Արմլեքս» համակարգում առկա են երկու բաժիններ իրենց ենթաբաժիններով՝ «Հիմնական», որն ունի երեք ենթաբաժին՝ «Բոլորը», «Վերադարձվածները», «Գործացանկ» և «Կարգավորումներ», որն ունի մեկ ենթաբաժին «Անձնական»: «Բոլորը» ենթաբաժնում ներառված են դատավորի կողմից տրված բոլոր կատարողական թերթերը, «Վերադարձվածները» ենթաբաժնում ներառված են միայն վերադարձված կատարողական թերթերը, «Գործացանկ» ենթաբաժնի միջոցով հնարավոր է տեսնել հստակ որոշակի ամսաթվին ուղարկված կատարողական թերթերը, իսկ «Անձնական» ենթաբաժինը հնարավորություն է տալիս փոխելու միայն օգտատիրոջ անունը կամ մուտքի գաղտնաբառը կամ երկուսը միասին: Այսինքն, համակարգում որևէ տեղ չի արտացոլվում թե օրինակ, որ քաղաքացիական գործով է ստացվել կատարողական վարույթն ավարտելու մասին որոշում և յուրաքանչյուր դեպքում որոշակի ժամանակահատվածը մեկ դատավորի աշխատակազմը դատական գործերի հերթական համարների միջոցով որոնում է կատարում համակարգում և, ըստ այդմ, որոշման առկայության դեպքում, տպում է այն և ներկայացնում գրասենյակ, իսկ մուտքագրումից հետո շարունակում իրականացնել համապատասխան գործողությունները: Ընդ որում՝ դատարանների գերծանրաբեռնվածության պայմաններում հնարավոր չէ յուրաքանչյուր օր ստուգել հարյուրավոր գործերով կատարողական թերթերի ընթացքը, քանի որ կստացվի այնպիսի իրավիճակ, որ դատավորն ու իր աշխատակազմը, բացի կատարողական թերթի ընթացքը ստուգելուց որևէ այլ պարտականություն ուղղակիորեն չեն կարող իրականացնել:

Սույն դեպքում վարույթ հարուցող մարմինն իրեն ողջամիտ ժամկետում գործի քննությունն չիրականացնելու վերաբերյալ խախտում վերագրելով, որևէ կերպ չի բացահայտել և չի հիմնավորել թե արդյոք Դատավորը կամ վերջինիս աշխատակազմը ծանուցվել են կատարողական վարույթի ավարտի մասին, թե ոչ, կամ երբ է ծագել դատավորի աշխատակազմի հնարավորությունը՝ տեղեկանալու կատարողական վարույթն ավարտելու մասին որոշմանը:

Հաշվի առնելով, որ կատարողական վարույթն ավարտելու մասին որոշման ուղարկման վերաբերյալ Դատարանն առանձին չի ծանուցվել, ուստի 2022 թվականի փետրվարի 3-ին Դատարանի կողմից ձեռնարկված գործողությունների արդյունքում, «Արմլեքս» համակարգից տեղեկանալով որոշման ստացման մասին, Դատարանը ձեռնամուխ է եղել սահմանված ընթացակարգին համապատասխան գործողությունների կատարմանը, այդ թվում՝ որոշման մուտքագրմանը և դրա ստացումից հետո ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 166-րդ հոդվածով սահմանված դատավարական գործողությունների կատարմանը:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ Դատավորը նշել է, որ 2022 թվականի փետրվարի 3-ից իրականացնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործողությունները, պահպանել է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը,

հայցադիմումի օրինակը և կից փաստաթղթերը պատասխանողին տրամադրելու, նախնական դատական նիստ նշանակելու և հրավիրելու նախատեսված դատավարական ժամկետները:

Վերոգրյալով պայմանավորված անդրադառնալով գործի քննության ողջամիտ ժամկետի պահպանված չլինելու վերաբերյալ փաստարկներին, որպիսին վարույթ հարուցող մարմինը պայմանավորել է վերոգրյալ նորմով սահմանված դատավարական ժամկետի խախտմամբ՝ Դատավորը նշել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով դատավարական ժամկետներն իրենց բնույթով բաժանված են երկու խմբի՝ ժամկետներ, որոնց խախտումն իրավական և փաստական առումով դատավարության մասնակիցների համար հանգեցնում է որոշակի հետևանքների և ժամկետներ, որոնց խախտման դեպքում դատավարության մասնակցի համար որևէ հետևանք ինքնին չի առաջանում:

Սույն դեպքում Գործի քննության ողջամիտ ժամկետը պահպանված լինելու/չլինելու եզրահանգում կատարելու համար Դատավորը հարկ է համարել գնահատել Գործի ամբողջ քննության ընթացքը, քանի որ անկախ այն հանգամանքից նախնական դատական նիստը կհրավիրվեր 2021 թե 2022 թվականին, որևէ կերպ հնարավոր չէ պնդում կատարել, որ քաղաքացիական գործի քննությունը կտևեր ավելի կարճ, քան ներկայումս իրականացվել է: Ավելին, Դատարանի կողմից իրականացված գործողությունների ամբողջ տրամաբանությունից հետևում է, որ վերջինս ձեռնամուխ է եղել հենց ողջամիտ ժամկետում գործի քննության իրականացմանը և նշվածով պայմանավորված նաև դրա ավարտին:

Դատավորը նշել է, որ վերոգրյալի ամփոփմամբ իր կողմից թույլ չի տրվել դատավարական նորմի այնպիսի խախտում, որն Օրենսգրքի իմաստով կարող է գնահատվել, որպես կարգապահական խախտում: Այդուհանդերձ, եթե Խորհուրդը գտնի, որ թույլ է տրվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 166-րդ հոդվածի պահանջների խախտում, ապա խնդրել է վերոգրյալ փաստարկների հաշվառմամբ գնահատել այն որպես նվազ կարևորություն ունեցող, քանի որ ինքնին որևէ հետևանք չի առաջացրել դատավարության մասնակիցների համար: Ավելին, դատական ակտը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:

Անդրադառնալով վարույթը հարուցող մարմնի այն դիրքորոշմանը, որ դատական ակտում Պատասխանողի հայցադիմումի պատասխանի ներառումը հանգեցրել է հակասական իրավիճակի՝ Դատավորը նշել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 139-րդ հոդվածի, 9-րդ հոդվածի 2-րդ մասի, 192-րդ հոդվածի 1-ին մասի, 3-րդ մասի 6-րդ կետի կանոնակարգումներից ուղղակիորեն հետևում է, որ օրենսդիրը սահմանել է դատարանի պարտականությունը՝ անդրադառնալու դատավարության մասնակիցներից յուրաքանչյուրի բոլոր էական փաստարկներին, միաժամանակ նշվածին զուգահեռ դատարանի վճռին ներկայացվող պահանջներում օրենսդիրը շեշտադրել է պատասխանողի դիրքորոշումը ներառելու դատարանի պարտականությունը: Ավելին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը հստակ սահմանել է այն դեպքերը, երբ հայցադիմումի պատասխանը համարվում է դատարան չներկայացված, որոնց շարքում այնպիսի դեպք, ինչպիսին է հանդիսանում վարույթը հարուցող մարմնի մեկնաբանությունների լույսի ներքո ներկայացված խախտմամբ պատասխան

ներկայացված լինելը, ներառված չէ, հետևաբար Դատարանը կրել է ուղղակի պարտականություն հայցադիմումը պատասխանը դատական ակտում ներառելու և դրանում ամրագրված փաստարկներին անդրադառնալու կամ չանդրադառնալու մասով պատճառաբանություն ներկայացնելու վերաբերյալ:

Տվյալ պարագայում հիմք ընդունելով այն հանգամանքը, որ վարքագծի կանոնների խախտումները ներկայացվել են որպես հետևանք, մինչդեռ վերոգրյալով արդեն իսկ հերքվում է իր կողմից դատավարական նորմերի պահանջների խախտումը՝ Դատավորը նշել է, որ հերքվում են նաև իր կողմից վարքագծի կանոնի խախտում թույլ տրված լինելու հանգամանքները:

4. **<u>Հարուցված կարգապահական վարույթի համար էական նշանակություն ունեցող հանգամանքները</u>**

4.1 Դատարանը 2020 թվականի մարտի 24-ի որոշմամբ վարույթ է ընդունել «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ (այսուհետ՝ Հայցվոր) հայցադիմումն ընդդեմ Հովհաննես Հարությունյանի և Աշոտ Մայիլյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին (թիվ ԵԴ/10027/02/20 քաղաքացիական գործ): Հայցադիմումը պարունակել է հայցագնի չափով պատասխանողներին պատկանող գույքի վրա արգելանք դնելու մասին միջնորդություն:

4.2 Դատարանը, 2020 թվականի մարտի 24-ի որոշմամբ բավարարելով Հայցվորի՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը, հայցագնի՝ 2.115.583 ՀՀ դրամի չափով արգելանք է դրել պատասխանողներ Հովհաննես Հարությունյանին և Աշոտ Մայիլյանին սեփականության իրավունքով պատկանող գույքի, բացառությամբ աշխատավարձի և դրան հավասարեցված միջոցների վրա:

4.3 Դատարանի կողմից վերոնշյալ որոշման հիման վրա 2020 թվականի ապրիլի 13-ին էլեկտրոնային (ԱրմԼեքս) համակարգում գեներացնելու միջոցով տրվել են թիվ ԿԹ-261512-2020 (Հովհաննես Հարությունյան) և թիվ ԿԹ-261528-2020 (Աշոտ Մայիլյան) կատարողական թերթերը:

4.4. Դատարանի 2020 թվականի մարտի 24-ի հայցադիմումը վարույթ ընդունելու և հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումները 2020 թվականի ապրիլի 17-ին (հանձնման մասին ծանուցմամբ) ուղարկվել են Հայցվորին:

4.5. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Արաբկիր նստավայրում 2020 թվականի մայիսի 18-ին և 2020 թվականի մայիսի 22-ին ստացվել են Պատասխանողի ներկայացուցչի դիմումները՝ «<u>www.datalex.am</u>» դատական տեղեկատվական համակարգի միջոցով Պատասխանողի դեմ հարուցված քաղաքացիական գործի և կիրառված արգելանքների մասին տեղյակ լինելու, միաժամանակ հայցադիմումի դեմ առարկելու, պատասխան ներկայացնելու նպատակով հայցադիմումի օրինակը և դատավարական փաստաթղթերը տրամադրելու պահանջի վերաբերյալ:

4.6. Դատարանի 2020 թվականի մարտի 24-ի հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը, հայցադիմումի օրինակը և կից փաստաթղթերի պատճենները 2020 թվականի մայիսի 27-ին (հանձնման մասին ծանուցմամբ) ուղարկվել են Պատասխանողի ներկայացուցչին, վերջինս այն ստացել է 2020 թվականի հունիսի 15-ին:

4.7. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Արաբկիր նստավայրում 2020 թվականի հունիսի 29-ին ստացվել է հայցադիմումի պատասխան՝ ներկայացված Պատասխանողի ներկայացուցչի կողմից:

4.8. Թիվ 261528 կատարողական թերթով 2020 թվականի ապրիլի 16-ին հարուցված թիվ 06073361 կատարողական վարույթով 2021 թվականի հուլիսի 2-ին կայացվել է կատարողական վարույթն ավարտելու մասին որոշումը, որն էլեկտրոնային (ԱրմԼեքս) համակարգ վերբեռնելու միջոցով ուղարկել է Դատավորին (ըստ միջնորդության):

4.9. Էլեկտրոնային (ԱրմԼեքս) համակարգից ներբեռնված որոշման վրա առկա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Արաբկիր նստավայրի շտամպը՝ «03.02.2022» ամսաթվով:

4.10. Դատարանի 2020 թվականի մարտի 24-ի հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը, հայցադիմումի օրինակը և կից փաստաթղթերի պատճենները 2022 թվականի փետրվարի 10-ին (հանձնման մասին ծանուցմամբ) ուղարկվել են Պատասխանողին և Հ. Հարությունյանին, վերջիններս դրանք ստացել են համապատասխանաբար 2022 թվականի մարտի 16-ին և 2022 թվականի փետրվարի 18[1]-ին:

4.11. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Արաբկիր նստավայրում 2022 թվականի մարտի 17-ին ստացվել է Հ. Հարությունյանի միջնորդությունը՝ Գործով պարզեցված վարույթի անցնելու մասին:

4.12. Դատարանը 2022 թվականի ապրիլի 4-ին կայացրել է նախնական դատական նիստ նշանակելու մասին որոշում, որով նախնական դատական նիստը նշանակվել է 2022 թվականի մայիսի 16-ին:

4.13. Դատարանի նախնական դատական նիստ նշանակելու մասին որոշումը (հանձնման մասին ծանուցմամբ) 2022 թվականի մայիսի 18-ին ուղարկվել է Հայցվորին, Պատասխանողին և Հ. Հարությունյանին, վերջիններս այն ստացել են համապատասխանաբար 2022 թվականի մայիսի 20-ին, 2022 թվականի մայիսի 21-ին, իսկ Պատասխանողին առաքված ծրարը վերադարձվել է Դատարան՝ չպահանջված նշմամբ:

4.14. Դատարանի 2022 թվականի մայիսի 16-ի արձանագրային որոշմամբ նշվել է Հայցվորին և Պատասխանողին ուղարկված դատական ծանուցագրի հետադարձ հավաստագիրը Դատարան ստացված չլինելու հանգամանքը և կողմերին կրկին ծանուցելու նպատակով նախնական դատական նիստը հետաձգվել է, հաջորդ նախնական դատական նիստը նշանակվել է 2022 թվականի սեպտեմբերի 5-ին:

4.15. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Արաբկիր նստավայրում 2022 թվականի օգոստոսի 29-ին ստացվել է Պատասխանողի

[1] Հետադարձի ծանուցագրում ձեռագիր գրառմամբ կատարված ամսաթվի երկրորդ թվանշանը նման է 8-ի:

դիմումը՝ դատական նիստերն իր բացակայությամբ, գրավոր ապացույցների հիման վրա անցկացնելու մասին:

4.16. Դատարանը 2022 թվականի սեպտեմբերի 5-ին կայացրել է Գործը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին որոշում, որով դատական ակտի հրապարակման օր է նշանակվել 2022 թվականի սեպտեմբերի 16-ը:

4.17. Դատարանի 2022 թվականի սեպտեմբերի 16-ի վճռով հայցը բավարարվել է:

4.18. Արդարադատության նախարարի պարտականությունները կատարողը Ծառայության ղեկավարին հասցեագրված գրությամբ խնդրել է տրամադրել հետևյալ տեղեկատվությունը՝

-թիվ 06073361 կատարողական վարույթին վերաբերող էլեկտրոնային (ԱրմԼեքս) համակարգի քաղվածքը, որն ամբողջությամբ կարտացոլի նշված վարույթով դատարանի և ծառայության միջև իրականացված էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը,

-տեղեկատվություն այն մասին, թե էլեկտրոնային համակարգի միջոցով թիվ 06073361 կատարողական վարույթի շրջանակներում հարկադիր կատարողի կողմից կայացված որ որոշումներն են (պարտապանի գույքի վրա արգելանք դնելու, թե կատարողական վարույթն ավարտելու վերաբերյալ) ուղարկվել:

4.19. Ծառայության ղեկավարի կողմից 2022 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ Եվ/4922 գրությամբ տրվել է հետևյալ պատասխանը. «(…) տրամադրվում է էլեկտրոնային (ԱրմԼեքս) համակարգի ՀԿԱ ծառայության տիրույթում առկա՝ դատարանի և Ծառայության միջև էլեկտրոնային եղանակով իրականացված թիվ ԵԴ/10027/02/20 կատարողական թերթին (կատարողական վարույթ՝ թիվ 06073361) առնչվող փաստաթղթերի շարժի քաղվածքը:

Միաժամանակ հայտնում եմ, որ Ծառայության կողմից համակարգ ներբեռնվել է միայն կատարողական վարույթն ավարտելու մասին որոշումը, որը որևէ այլ եղանակով դատարան չի ուղարկվել»:

Ըստ նշված քաղվածքի «Գործընթաց» բաժնում լրացված են հետևյալ տվյալները՝ «Հաստատել Կ/Թ Ամալյան Էդուարդ 13.04.2020 18:55:32», «Ստանալ Թումանյան Սոնա 14.04.2020 10:06:05», «Տեղափոխել Կ/Թ այլ ՀԿԾ բաժին Թումանյան Սոնա 15.04.2020 09:22:16», «Տեղափոխել Կ/Թ այլ ՀԿԾ բաժին Թումանյան Սոնա 15.04.2020 14:44:17», «Ստանալ Թումանյան Սոնա 15.04.2020 15:37:40», «Ծանուցել դատարանին Գործողության ամսաթիվ 08.07.2021թ. Փաստաթղթի անվանում Ծանուցել դատարանին» (ըստ միջնորդության՝ կատարողական վարույթն ավարտելու մասին որոշումը Դատարան է ուղարկվել 2021 թվականի հուլիսի 8-ին):

4.20. Արդարադատության նախարարի պարտականությունները կատարողը Դատական դեպարտամենտի ղեկավարին հասցեագրված գրությամբ խնդրել է տրամադրել տեղեկատվություն առ այն, թե Կառավարության 2018 թվականի մարտի 29-ի թիվ 350-Ն որոշման կարգավորումների լույսի ներքո, որպես օգտատեր ում է տրամադրվում անհատական մուտքանուն և գաղտնաբառ դատական գործի ու կատարողական վարույթի շրջանակներում էլեկտրոնային (ԱրմԼեքս) համակարգի միջոցով ծառայություն փաստաթղթեր ուղարկելու և ծառայությունից փաստաթղթեր ստանալու

համար (կոնկրետ դատավորին կամ նրա աշխատակազմին, թե դատարանի աշխատակազմին):

4.21. Դատական դեպարտամենտի ղեկավարի պաշտոնակատարի կողմից 2022 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ ԴԴ-1 ԴԴ-Գ-1332 գրությամբ տրվել է պատասխան առ այն, որ կատարողական վարույթի շրջանակներում էլեկտրոնային (ԱրմԼեքս) համակարգում անհատական մուտքային անուն և գաղտնաբառ տրամադրվում է «ՄԵՅՍԻՍ ԻՆՖՈՐՄԵՅՇՆ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ կողմից՝ դատավորներին և դատավորների օգնականներին՝ հիմք ընդունելով վերջիներիս անձնական տվյալների առկայությունը «Դատական համակարգ» համակագչային ծրագրում:

5. <u>Հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում էական նշանակություն ունեցող իրավական հարցադրումները</u>

Հաշվի առնելով Նախարարի կողմից միջնորդությունում բերված փաստարկներն ու հիմնավորումները և դրանց դեմ Դատավորի ու նրա ներկայացուցչի կողմից ներկայացված պատասխանը՝ Խորհուրդը Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը լուծելու համար էական է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

5.1. արդյո՞ք թիվ ԵԴ/10027/02/20 քաղաքացիական գործով Դատավորի կողմից թույլ է տրվել դատավարական իրավունքի նորմի (նորմերի) խախտում,

5.2. արդյո՞ք Դատավորի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի նորմի (նորմերի) ենթադրյալ խախտումն առերևույթ պարունակում է Օրենսգրքով սահմանված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի հատկանիշներ:

6. <u>Խորհրդի պատճառաբանությունները և եզրահանգումները</u>

Քննարկելով Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը, լսելով Նախարարի հաղորդումը, ինչպես նաև Նախարարի տեղակալի և ներկայացուցիչների, Դատավորի ու նրա ներկայացուցչի դիրքորոշումները, ուսումնասիրելով կարգապահական վարույթի նյութերը՝ Խորհուրդը գտնում է, որ ներկայացված միջնորդությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է, անաչառ և գործում է միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իսկ 173-րդ հոդվածի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը:

Խորհուրդն արձանագրում է, որ դատավորի, դատարանի և դատական իշխանության անկախության վերաբերյալ իրավական կարգավորումներն ամրագրված են ինչպես ներպետական օրենսդրությամբ, այնպես էլ միջազգային իրավական փաստաթղթերով, ընդ որում դատավորի անկախության վերաբերյալ իրավական կարգավորումների ընդհանուր իրավական բովանդակության էությունը կայանում է նրանում, որ դատավորի անկախությունը հանդիսանում է ոչ միայն նրա իրավունքը, այլ հասարակության՝ օրինական և հիմնավորված արդարադատության իրականացման ապահովման երաշխիքը:

Խորհուրդը հարկ է համարում նշել, որ դատավորի անկախության երաշխիքներն ապահովող գործիքակազմում կարևոր տեղ է զբաղեցնում դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտը: ԵԱՀԿ/ԺՄԻԳԻ՝ «Արևելյան Եվրոպայում, Հարավային Կովկասում, Կենտրոնական Ասիայում դատական անկախության վերաբերյալ Կիևյան հանձնարարականների» 25-րդ կետի համաձայն. «Դատավորների նկատմամբ կարգապահական վարույթներով պետք է լուծվեն ենթադրյալ մասնագիտական խախտումների այն դեպքերը, որոնք կոպիտ են, աններելի և խարխլում են դատական իշխանության հեղինակությունը: Դատավորները չպետք է պատասխանատվության ենթարկվեն իրենց որոշումների կամ վճիռների բովանդակության, այդ թվում՝ տարբեր դատարանների կողմից իրավական նորմերի տարաբնույթ մեկնաբանության, դատական սխալների օրինակների կամ դատարանների քննադատության համար»:

Խորհրդն իր սահմանադրական առաքելության հաշվառմամբ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու լիազորությունը պետք է իրականացնի այնպես, որպիսի չվտանգի դատավորի և դատարանի անկախության սահմանադրական պահանջը:

Օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝

1) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ.

2) դատավորի կողմից սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորի վարքագծի կանոնները խախտելը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Օրենսգրքի 142-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ արարքը չի համարվում կարգապահական խախտում, եթե այն, թեև ձևականորեն պարունակում է սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի հատկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով կասկածի տակ չի դնում տվյալ դատավորի համապատասխանությունը դատավորի կարգավիճակին և իր էությամբ չի կարող հեղինակազրկել դատական իշխանությունը:

Վերոգրյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել հետևյալը.

1. դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու զանցակազմն ունի ոչ միայն ձևական, այլև նյութական բաղադրիչ,

2. դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու զանցակազմի նյութական բաղադրիչը պայմանավորված է խախտման կարևորության աստիճանով,

3. դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու զանցակազմի նյութական բաղադրիչը՝ խախտման կարևորության աստիճանը, որպես հետևանք, պետք է կասկածի տակ դնի դատավորի համապատասխանությունն իր կարգավիճակին և հեղինակազրկի դատական իշխանությունը:

Խորհուրդն իր թիվ ԲԴԽ-7-Ո-Կ-02 որոշմամբ արձանագրել է. *«(…) հաշվի առնելով դատավորի անկախության սահմանադրական և միջազգային իրավական պահանջները և այդ համատեքստում գնահատելու համար դատավորի կողմից կատարված իրավունքի խախտման ու դրանով պայմանավորված կարգապահական պատասխանատվության ենթարկելու առկայության կամ բացակայության իրավական հիմքը, որոշիչ նշանակություն է ձեռք բերում նրա կողմից կատարված իրավունքի խախտման կարևորության աստիճանը: (…)»:*

Նույն որոշմամբ Խորհուրդն արձանագրել է, որ *«(…) սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, որն իրականացվում է դատարանի կողմից օբյեկտիվ իրավունքի կիրառմամբ, իր հանրային իրավական ընկալման փիրույթում կոչված է ապահովելու գործող իրավակարգի անշեղ կենսագործումը: Այդ առումով իրավունքի յուրաքանչյուր խախտում այս կամ այն կերպ բացասաբար է անդրադառնում իրավակարգի բնականոն գործելու վրա: Միաժամանակ հարկ է նշել, որ կախված իրավախախտման հետևանքից, այն տարաբնույթ անդրադարձ կարող է ունենալ պետության իրավակարգի գործառնական խնդիրների լուծման վրա: Այն բոլոր դեպքերում, երբ իրավունքի խախտումն առաջ չի բերում որևէ սուբյեկտիվ իրավունքից զրկում կամ դրա սահմանափակում, ինչպես նաև իրավունքի սուբյեկտի մոտ չի առաջացնում օրենքով չնախատեսված պարտականություններ կամ այդպիսիք առաջանալու հնարավորություն, ապա իրավունքի նման խախտումը զանցակազմի նյութական բաղադրիչի առկայության պայմաններում «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով կարող է որակվել որպես նվազ կարևորություն ունեցող և դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք չհանդիսացող, թեկուզև այն առերևույթ պարունակել է կարգապահական խախտում համարվող արարքի հատկանիշներ(…)[2]»:*

[2] Տե՛ս Բարձրագույն դատական խորհրդի 2021թ. ապրիլի 05-ի թիվ ԲԴԽ-7-Ո-Կ-02 որոշումը:

Վերոշարադրյալ իրավական վերլուծությունների լույսի ներքո անդրադառնալով սույն միջնորդության հիմքերին և հիմնավորումների Խորհուրդն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-3-րդ մասերը համապատասխանաբար սահմանում են՝

1. Առաջին ատյանի դատարանը վարույթ է ընդունում ներկայացված հայցադիմումը, եթե առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

2. Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելու օրվանից եռօրյա ժամկետում առաջին ատյանի դատարանն այդ որոշումն ուղարկում է գործին մասնակցող անձանց:

3. Այն դեպքում, երբ հայցվորը հայցադիմումի հետ միջնորդություն է ներկայացրել հայցի կամ ապացույցների ապահովման պահանջով, և դատարանը բավարարել է այդ միջնորդությունը, ապա հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը, հայցադիմումը և դրան կից փաստաթղթերի պատճեններն ուղարկվում են պատասխանողին և գործին մասնակցող այլ անձանց հայցի կամ ապացույցների ապահովման մասին դատարանի որոշումը կատարելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը պատասխանողին ուղարկելու հետ միաժամանակ նրան տեղեկացնում է հայցադիմումի պատասխան ներկայացնելու իրավունքի և ժամկետի մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը կարող է ներկայացվել առաջին ատյանի դատարան հայցադիմումի հետ կամ մինչև գործով դատաքննության ավարտը: Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը կարող է շարադրվել հայցադիմումում:

Նույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը դատարանը քննում է առանց դատական նիստ հրավիրելու ոչ ուշ, քան այն ստանալու հաջորդ օրը, իսկ եթե միջնորդությունը ներկայացվել է հայցադիմումի հետ, ապա հայցադիմումը վարույթ ընդունելու հետ մեկտեղ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշման հիման վրա կազմված կատարողական թերթը դատարանն անհապաղ ուղարկում է հարկադիր կատարման, իսկ 2-րդ մասի համաձայն՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին դատարանի որոշումը կատարվում է անհապաղ՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Նույն օրենսգրքի 139-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանողը հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա

ժամկետում, դատարան է ներկայացնում հայցադիմումի պատասխան: Հայցադիմումի պատասխանը ներկայացվում է գրավոր՝ սույն օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պահանջների պահպանմամբ: Հայցադիմումի պատասխանը պետք է լինի ընթեռնելի: Ելնելով գործի առանձնահատկություններից՝ դատարանը կարող է պատասխանողի միջնորդությամբ երկարաձգել պատասխան ներկայացնելու ժամկետը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցային վարույթի գործերով նախնական դատական նիստի անցկացումը պարտադիր է, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործը քննում է պարզեցված վարույթի կարգով կամ կիրառում է արագացված դատաքննություն:

Նույն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը պատասխանողից հայցադիմումի պատասխան ստանալու, իսկ այն չներկայացվելու դեպքում պատասխան ուղարկելու համար սահմանված ժամկետն ավարտվելու, ինչպես նաև վերադաս դատարանից գործն ստանալու օրվան հաջորդող եռօրյա ժամկետում որոշում է կայացնում նախնական դատական նիստ նշանակելու վերաբերյալ, որն ուղարկվում է գործին մասնակցող անձանց, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախնական դատական նիստը պետք է հրավիրվի այն նշանակելու մասին որոշման կայացմանը հաջորդող երեսնօրյա ժամկետում:

Խորհուրդն արձանագրում է, որ վկայակոչված իրավական կարգավորումներից հետևում է, որ դատարանն օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ ներկայացված հայցադիմումն ընդունում է վարույթ և եռօրյա ժամկետում այդ որոշումն ուղարկում է գործին մասնակցող անձանց: Հայցվորի կողմից հայցադիմումի հետ հայցի ապահովման միջնորդություն ներկայացված լինելու դեպքում դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հետ մեկտեղ առանց դատական նիստ հրավիրելու քննում է այդ միջնորդությունը և բավարարման որոշում կայացնելու դեպքում դրա հիման վրա կազմված կատարողական թերթն անհապաղ ուղարկում է հարկադիր կատարման: Միաժամանակ օրենսդիրը հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդության քննության համար սահմանել է սեղմ ժամկետ, ինչն ինքնանպատակ չէ, և պայմանավորված է այն հանգամանքով, որ հայցի ապահովման միջոց կիրառելու գործընթացի երկարաձգումը կարող է պարզապես իմաստազրկել հայցի ապահովման միջոցի կիրառումը:

Հայցադիմումի հետ ներկայացված հայցի ապահովման միջոց կիրառելու միջնորդությունը բավարարելու դեպքում օրենսդիրը հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը, հայցադիմումը և դրան կից փաստաթղթերի պատճենները պատասխանողին և գործին մասնակցող անձանց ուղարկելու ժամկետի հարցում սահմանել է հատուկ իրավակարգավորումներ, այն է՝ նշված փաստաթղթերը վերջիններիս են ուղարկվում հայցի ապահովման մասին դատարանի որոշումը կատարելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Ավելին, օրենսդիրը պատասխանողի կողմից հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը ստանալու հետ է կապել հայցադիմումի պատասխան ներկայացնելու ժամկետը, այն է՝ որոշումը ստանալուց հետո երկշաբաթյա ժամկետում, իսկ հայցադիմումի պատասխանը դատարանում ստացվելուց, իսկ այն չներկայացնելու դեպքում պատասխան ներկայացնելու ժամկետն ավարտվելուց հետո դատարանը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում նախնական դատական նիստ նշանակելու մասին, որն իր հերթին պետք է հրավիրվի որոշման կայացմանը հաջորդող երեսնօրյա ժամկետում:

Քննարկվող պարագայում Դատարանի կողմից 2020 թվականի ապրիլի 13-ին էլեկտրոնային եղանակով տրված կատարողական թերթերի հիման վրա Ծառայությունում հարուցված կատարողական վարույթն ավարտվել է 2021 թվականի հուլիսի 2-ին, մինչդեռ Դատարանը, 2020 թվականի մայիսի 18-ին և 22-ին ստանալով Պատասխանողի ներկայացուցչի դիմումները, հայցադիմումը վարույթ ընդունելու որոշման օրինակը, հայցադիմումի և կից փաստաթղթերի պատճենները Պատասխանողին ուղարկել է (հետադարձի մասին ծանուցմամբ) 2020 թվականի մայիսի 27-ին, որոնք վերջինս, ստանալով հունիսի 15-ին, ներկայացրել է հայցադիմումի պատասխան՝ 2020 թվականի հունիսի 29-ին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդվածով սահմանված է, որ գործին մասնակցող անձինք, ի թիվս այլնի, սույն օրենսգրքի և այլ օրենքների պահանջների պահպանմամբ, իրավունք ունեն ծանոթանալու գործի նյութերին, ստանալու դրանց պատճենները, գործի նյութերից անելու քաղվածքներ, լուսանկարներ, լուսապատճեններ և պատճեններ:

Տվյալ դեպքում Պատասխանողի ներկայացուցիչը Դատարան ներկայացրած դիմումներով նշել է, որ Գործով հարուցված հայցի և կիրառված արգելանքի մասին տեղեկացել է «Դատալեքս» տեղեկատվական կայքից և խնդրել է հայցադիմումի դեմ առարկելու, պատասխան ներկայացնելու նպատակով տրամադրել հայցադիմումի օրինակը և դատավարական փաստաթղթերը, ինչն էլ կատարվել է Դատարանի կողմից:

Օրենսդրական կարգավորումների և սույն գործի փաստական հանգամանքների հաշվառմամբ, Խորհուրդը գտնում է, որ այն պայմաններում, երբ առկա չէ ուղղակի սահմանափակող օրենսդրական կարգավորում, հետևաբար նշված դեպքում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքը բացակայում է, հատկապես հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ որևէ բացասական հետևանք չի առաջացել:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ հարկադիր կատարողն ավարտում է կատարողական վարույթը, եթե՝ ավարտվել են հայցի ապահովման վերաբերյալ կատարողական թերթի պահանջների կատարմանն ուղղված կատարողական գործողությունները:

Նույն օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարողի որոշման պատճենը, ոչ ուշ, քան որոշումը կայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, սույն օրենքի 28.1-

ին հոդվածով սահմանված կարգով հանձնվում (ուղարկվում) է պահանջատիրոջը և պարտապանին, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ անձանց և մարմիններ:

Միջանկյալ դատական ակտերի հիման վրա տրված կատարողական թերթերով հարուցված վարույթներով կայացված որոշումները հարկադիր կատարողն էլեկտրոնային եղանակով ուղարկում է կատարողական թերթ տված դատարան:

Դատարանի և Ծառայության միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է էլեկտրոնային համակարգի միջոցով: Միաժամանակ Կառավարության կողմից 2018 թվականի մարտի 29-ին ընդունված թիվ 350-Ն որոշմամբ սահմանված հավելվածով սահմանված է դատարանների և հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջև էլեկտրոնային եղանակով օրենքով սահմանված փաստաթղթերը ներկայացնելու կարգը:

Այսպես, ըստ նշված Որոշման *հավելվածի*՝

1. Դատարանների և հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ ծառայություն) միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է դատարանների և ծառայության միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ապահովման նպատակով ստեղծված էլեկտրոնային համակարգում (այսուհետ՝ էլեկտրոնային համակարգ) կատարողական թերթի, կատարողական վարույթին առնչվող որոշումների, դատական ակտերի, դիմումների և օրենքով սահմանված այլ փաստաթղթերի (այսուհետ միասին՝ փաստաթղթեր) գեներացման (տվյալների մուտքագրման միջոցով ավտոմատ ստեղծման), վերբեռնման (մուտքագրման) և ներբեռնման (էլեկտրոնային համակարգում դիտելու և ստանալու) միջոցով:

2. Էլեկտրոնային համակարգի միջոցով փաստաթղթեր ուղարկելու և ստանալու նպատակով օգտատերը (դատավորը՝ իր աշխատակազմի կամ դատարանը՝ դատարանի աշխատակազմի միջոցով և ծառայությունը՝ իրավասու ստորաբաժանման միջոցով) մուտք է գործում էլեկտրոնային համակարգ: Էլեկտրոնային համակարգ մուտք գործելով՝ օգտատերը ստանում է էլեկտրոնային համակարգի միջոցով փաստաթղթեր դիտարկելու, ներբեռնելու, գեներացնելու, վերբեռնելու (մուտքագրելու) և սույն կարգով նախատեսված՝ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության իրականացմանն ուղղված այլ գործողություններ իրականացնելու իրավասություններ:

3. Գործերի վերաբաշխման դեպքերում իրավասու անձն էլեկտրոնային համակարգում կատարում է անհրաժեշտ նշում դատական գործերի և կատարողական վարույթների շրջանակում ուղարկվող և ստացվող փաստաթղթերը այլ դատավորի փոխանցելու, նրան հասանելի դարձնելու համար:

4. Էլեկտրոնային համակարգ մուտքը կատարվում է անհատական մուտքանվան և գաղտնաբառի մուտքագրման միջոցով: Յուրաքանչյուր օգտատեր իր անհատական մուտքանվան և գաղտնաբառի մուտքագրման միջոցով մուտք է գործում էլեկտրոնային համակարգի իր հասանելի տիրույթ, որտեղ արտացոլվում են իրեն մակագրված՝

համապատասխանաբար դատական գործերի և կատարողական վարույթների շրջանակում ուղարկվող և ստացվող փաստաթղթերը:

5. Փաստաթղթերն ուղարկվում են դրանք էլեկտրոնային համակարգում գեներացվելու կամ վերբեռնելու, իսկ ստացվում են էլեկտրոնային համակարգից դրանք ներբեռնելու միջոցով: *Փաստաթղթի ուղարկման դեպքում սպացող օգտատերը էլեկտրոնային եղանակով ծանուցվում է փաստաթղթի սպացման մասին:*

Ըստ վարույթ հարուցող մարմնի՝ Դատարանի կողմից 2020 թվականի ապրիլի 13-ին էլեկտրոնային եղանակով տրված կատարողական թերթերի հիման վրա Ծառայությունում հարուցված կատարողական վարույթն ավարտվել է 2021 թվականի հուլիսի 2-ին, որն էլեկտրոնային համակարգի միջոցով ուղարկվել է Դատավորին 2021 թվականի հուլիսի 8-ին, սակայն Դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը, հայցադիմումի օրինակը և կից փաստաթղթերի պատճենները 2022 թվականի փետրվարի 10-ին է (հանձնման մասին ծանուցմամբ) ուղարկել Պատասխանողին և Հ. Հարությունյանին, իսկ վերջիններս դրանք ստացել են համապատասխանաբար 2022 թվականի մարտի 16-ին և 2022 թվականի փետրվարի 18-ին:

Ըստ սույն վարույթի փաստերի՝ ի պատասխան Արդարադատության նախարարի պարտականությունները կատարողի գրության՝ Ծառայության ղեկավարի կողմից 2022 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ Եվ/4922 գրությամբ տրվել է հետևյալ պատասխանը. «(…) տրամադրվում է էլեկտրոնային (ԱրմԼեքս) համակարգի ՀԿԱ ծառայության տիրույթում առկա՝ դատարանի և Ծառայության միջև էլեկտրոնային եղանակով իրականացված թիվ ԵԴ/10027/02/20 կատարողական թերթին (կատարողական վարույթ՝ թիվ 06073361) առնչվող փաստաթղթերի շարժի քաղվածքը:

Միաժամանակ հայտնում եմ, որ Ծառայության կողմից համակարգ ներբեռնվել է միայն կատարողական վարույթն ավարտելու մասին որոշումը, որը որևէ այլ եղանակով դատարան չի ուղարկվել»:

Քննարկվող պարագայում Դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը, հայցադիմումի օրինակը և կից փաստաթղթերի պատճենները պատասխանողներին ուղարկել է նաև 2022 թվականի փետրվարի 10-ին (հանձնման մասին ծանուցմամբ), քանի որ հիմքում դրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Արաբկիր նստավայրի կնիքով՝ «03.02.2022» ամսաթվի թվագրմամբ փաստաթուղթը: Մինչդեռ Խորհուրդն արձանագրում է, որ Կառավարության վերոնշյալ որոշմամբ սահմանված է, որ Փաստաթղթի ուղարկման դեպքում ստացող օգտատերն էլեկտրոնային եղանակով ծանուցվում է փաստաթղթի ստացման մասին, իսկ դատավորը, հանդիսանալով արդարադատություն իրականացնող և լիարժեք պատասխանատվություն կրելով իր վարույթում առկա յուրաքանչյուր գործով օրենքով սահմանված ժամկետների պահպանման համար, պետք է պարբերաբար ստուգում իրականացնի ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով ստացվող փաստաթղթերի, այդ թվում էլեկտրոնային կարգով համակարգում Ծառայության կողմից ներբեռնված փաստաթղթերի ուսումնասիրության և համապատասխան

գործողությունների իրականացման ուղղությամբ՝ միաժամանակ պահպանելով գործի քննության ողջամիտ ժամկետները:

Ավելին, Խորհուրդը հարկ է համարում արձանագրել, որ եթե նույնիսկ հիմք ընդունենք Դատավորի կողմից վկայակոչված կատարողական վարույթն ավարտելու մասին որոշումը 03.02.2022 թվականին ստանալը, ապա տվյալ դեպքում ևս Դատավորը խախտել է դատավարական նորմերով սահմանված ժամկետները: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով Դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը, հայցադիմումը և դրան կից փաստաթղթերի պատճենները հայցի ապահովման մասին Դատարանի որոշումը կատարելուց հետո՝ եռօրյա ժամկետում պետք է ուղարկեր պատասխանողներին, այն է՝ մինչև 07.02.2022 թվականը ներառյալ, սակայն ուղարկել է 10.02.2022 թվականին:

Խորհուրդն արձանագրում է, որ վերը նշված հոդվածներով սահմանված ժամկետներն ըստ էության փոխկապակցված են, այն է՝ հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշման, հայցադիմումի և կից փաստաթղթերի պատճենների ստացման հետ է կապված հայցադիմումի պատասխանի ներկայացման ժամկետի հաշվարկը, ինչն իր հերթին կապված է նախնական դատական նիստ նշանակելու ժամկետը հաշվարկելու հետ, Դատավորի կողմից Փաստաթղթերն օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ ուղարկելն ինքնին հանգեցրել է նախնական դատական նիստ նշանակելու և դրան հաջորդող մյուս դատավարական գործողությունների ժամկետների հաշվարկման խախտումների: Ավելին, Խորհուրդը բազմիցս կարևորել է նաև, որ դատական գործընթացը չպետք է դիտարկվի որպես մեխանիկական կամ զուտ ընթացակարգային գործողությունների շղթա: Այն մշտապես գտնվում է դինամիկ վիճակում և պահանջում է առավելագույն ճկունություն, քանի որ յուրաքանչյուր գործով դատարանը առնչվում է անձի իրավունքների և ազատությունների իրացման ապահովման հետ:

Խորհուրդն ինչպես նախկին գործերով, սույն գործով կրկին արձանագրում է, որ օրենսդրի կողմից դատավարական ժամկետի նախատեսումն ինքնանպատակ չէ. ժամկետ նախատեսելով օրենսդիրը հետապնդում է իրավաչափ նպատակ, այն է՝ երաշխավորել տվյալ իրավահարաբերության մասնակիցների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, ապահովել իրավահարաբերությունների կայունությունը, որոշակիությունը, ինչպես նաև կանխել և բացառել «կամայականության վտանգ»-ը՝ տալով համապատասխան սուբյեկտներին իրենց վարքագիծն օրենքի պահանջներին համապատասխանեցնելու գործնական հնարավորություն:

Ավելին, ՀՀ սահմանադրական դատարանը թիվ ՍԴՈ-1585 որոշմամբ արձանագրել է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելու պահանջն արդար դատաքննության իրավունքի անկյունաքարերից մեկն է, և դրա խախտումը կարող է խաթարել արդարադատության բուն էությունը, ուղղակիորեն վտանգել արդարադատության իրականացման ողջ գործընթացի արդյունավետությունը և կասկածի տակ դնել այդ գործընթացի վստահելիությունը: Միջազգայնորեն ընդունված է այն մոտեցումը, համաձայն որի՝ «ուշացած

արդարադատությունը հավասար է մերժված արդարադատության»[3], քանի որ գործի քննության անհարկի ձգձգումները, նույնիսկ անկախ գործի ելքից, անարդյունավետ են դարձնում մարդու իրավունքների պաշտպանությունը[4]:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ գործի քննության ողջամիտ ժամկետը չունի ընդհանուր, բոլոր իրավիճակների համար կիրառելի թվային արտահայտություն. այն ենթակա է գնահատման յուրաքանչյուր դեպքում՝ հաշվի առնելով կոնկրետ գործի հանգամանքները: Ընդ որում, ՀՀ սահմանադրության 81-րդ հոդվածի ուժով անձի արդար դատաքննության իրավունքը և դրա բաղադրատարր հանդիսացող՝ ողջամիտ ժամկետում գործի քննության պահանջը մեկնաբանելիս պետք է հաշվի առնվի և կիրառվի, ի թիվս այլնի, նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած պրակտիկան[5]:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս անդրադարձել է գործի քննությունը ողջամիտ ժամկետում իրականացնելու պահանջի բովանդակությանը՝ ընդգծելով նաև այդ պահանջի կարևորությունը: Վերջինս, մասնավորապես, նշել է, որ պահանջելով գործերի քննություն «**ողջամիտ ժամկետում**»՝ Կոնվենցիան ընդգծում է այն հանգամանքը, որ արդարադատությունը չպետք է իրականացվի այնպիսի ձգձգումներով, որոնք կարող են վտանգել դրա արդյունավետությունն ու վստահելիությունը[6]:

Այսպիսով, Դատավորի կողմից թույլ է տրվել գործը ողջամիտ ժամկետում քննելու պահանջի խախտում, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ ըստ էության տվյալ դեպքում այդ կերպ դատավարության մասնակիցների համար որևէ բացասական իրավական հետևանք չի առաջացրել, չի բացառել դատավարության մասնակիցների իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության հնարավորությունը, Խորհուրդը գտնում է, որ Դատավորի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի նորմի առերևույթ խախտումը ձևականորեն պարունակում է Օրենսգրքով սահմանված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի հատկանիշներ, սակայն ունի նվազ կարևորություն, ինչի պատճառով կասկածի տակ չի դնում Դատավորի համապատասխանությունը դատավորի կարգավիճակին և իր էությամբ չի կարող հեղինակազրկել դատական իշխանությունը:

Ինչ վերաբերում է գերածառնաբեռնվածության վերաբերյալ Դատավորի փաստարկին, ապա հարկ է արձանագրել, որ այն տվյալ դեպքում որևէ կերպ չի կարող ազդեցություն ունենալ բացառելու համար Դատավորի կողմից դատավարական նորմի խախտման փաստը:

---

[3] Տե՛ս, օրինակ՝ ECHR, Cases of Vazagashvili and Shanava v. Georgia, application no. 50375/07, 18/07/2019, and Lopatin and Medvedskiy v. Ukraine, applications nos. 2278/03 and 6222/03, 20/05/2010):

[4] Տե՛ս, Սահմանադրական դատարանի 2021թ. մարտի 16-ի թիվ ՍԴՈ-1585 որոշումը:

[5] Տե՛ս, Սահմանադրական դատարանի 2021թ. մարտի 16-ի թիվ ՍԴՈ-1585 որոշումը:

[6] Տե՛ս, Cases of H. v. France, application no. 10073/82, 24/10/1989, and Katte Klitsche de la Grange v. Italy, application no. 12539/86, 27/10/1994:

Ամփոփելով վերոգրալը՝ Խորհուրդը գտնում է, որ տվյալ դեպքում կիրառելի է Օրենսգրքի 142-րդ հոդվածի 2-րդ մասը, ինչի հիմքով Դատավորի կողմից թույլ տրված արարքն իր նվազ կարևորության պատճառով կարգապահական խախտում չի համարվում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենսգրքի 94-րդ հոդվածի 6-րդ մասով, 142-րդ հոդվածի 2-րդ մասով, 154-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և 155-րդ հոդվածով՝ Խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Արդարադատության նախարարի միջնորդությունը՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Էդուարդ Ամալյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, մերժել:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ _____ ***Կ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ***

ԱՆԴԱՄՆԵՐ՝ _____ ***Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ***

_____ ***Ե. ԹՈՒՄԱՆՅԱՆՑ***

_____ ***Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ***

_____ ***Մ. ՄԱԿՅԱՆ***

_____ ***Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ***

_____ ***Ս. ՉԻՉՈՅԱՆ***

_____ ***Վ. ՔՈՉԱՐՅԱՆ***

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՎՐԻՊԱԿԻ ՈՒՂՂՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ